

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Ներկայ 1887 թիւի

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն ղրբով և նոյն սրբագրամայով: Մենք ստանում ենք սեփական
ՀԵՌԱՅԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսականը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱՍԳՐԱՍԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մի-
կիւնում, Թամարիսի տանը):

Կայսերութեան ուրիշ ջաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գիտնէ հետեւեալ հա-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», Իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Армянская газета „МШАКЪ“ печатаетъ объявленія на армянскомъ,
русскомъ и иностранныхъ языкахъ.

ПЛАТА за объявленія на четвертой страницѣ: 2 копѣйки со слова. Съ
объявленіемъ печатаемыхъ болѣе десяти разъ, дѣлается уступка.

Плата впередъ.

За ТРАУРНЫЯ объявленія на четвертой страницѣ взимается по 2
рубля, на первой страницѣ 4 рубля.

На первой страницѣ „Мшакъ“ никакія постороннія объявленія КРОМѢ
ТРАУРНЫХЪ не печатаются.

Адресъ: ТИФЛИСЪ, редакція газ. „Мшакъ“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաւառական գործիչ-
ներ. Նամակ Դուռնաց. Նամակ Աստրախանից.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի քա-
նի խօսք թիւրքահայերի մասին. Նամակ Պարս-
կաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.
—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—ԲՈՐՈՒՄ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պահանջ գրականութիւ-
նից.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՆԱՌԱԿԱՆ ԳՐԻՄԻՋՆԵՐ

Ապացուցութեան կարօտ չէ այն միտքը թէ
դաւառական կեանքի մտաւոր և հասարակական
առաջնորդները տեղական ինտելիգենցիան, տե-
ղական երիտասարդութիւնն է: Այդ գաւառական
ինտելիգենցիան է, որի անդամները թէ իբրև ու-
սուցիչ, թէ իբրև որ և ից պաշտօնայ, թէ իբրև
ուսեալ երիտասարդ, թէ իբրև ծառայող այսպէս
թէ այնպէս խմբեր կազմելով ղեկավարում են
գաւառական կեանքի հասարակական զանազան

գործերը: Հաստատապէս կարելի է ասել, որ մի
որ և ից գաւառական քաղաքի կամ գիւղաքա-
ղաքի հասարակական և մտաւոր գործերը այնքան
լաւ են ընթանում, որքան պատրաստ և եռան-
դոտ է տեղական ինտելիգենցիան, տեղական
գործիչները խումբը: Եւ ընդհակառակը,—այդ
տեղական ինտելիգենցիայի անպատրաստութիւնը
և միակողմանիութիւնը միշտ առաջ է բերում
գաւառական կեանքի մէջ մի տեսակ խօսք և
տատանվող դրութիւն, որի մէջ չէ կարողանում
անկն ոչ մի գործ, ոչ մի հասարակական գաղա-
փար: Տարբարադարձ մեր գաւառական կեանքի
մէջ այդ տեսակ երեւոյթն է աչքի ընկնում՝ տե-
ղական գործողները անպատրաստ լինելու և միա-
կողմանիութեան պատճառով: Եւ այդ էլ այն
պատճառով որ մեր երիտասարդութիւնը կեանքի
մէջ է մտնում՝ միմիայն վարդապետ յոյսերով, և
մեծ մասամբ վերացական սպասելիքներով:

Ուսումնարանի, կամ համալսարանի պատերից
գեղեցիկ իդէաներով զուրկ դալով երիտասարդը և
կեանքի մէջ մտնելով՝ առաջին անգամից զգում
է, որ իր ոտքերի տակի հողը շատ անհաստատ է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Բաւական անգամ առիթ եմ ունեցել թիւրքա-
հայ հրատարակութիւններում կարգաւ յօդուած-
ներ թիւրքա-հայերի գրականութեան մասին: Այդ
յօդուածներն ընդհանրապէս կրում են դուլասա-
նական ընտրութիւն, թէպէտ և ունեն յաւակնու-
թիւն (prétention) լուրջ ու անաչառ քննադատու-
թեան նմանելու: Գրական գրութեանը ենթարկել
կրիտիկայի և մատնացոյց անել նրա արժանաւո-
րութիւններն ու պակասութիւնները—դա պոլսա-
հայ օղաներ (ode) կարգացող «բաղնազէտ» քնն-
նադատներին բոլորովին օտար է: Այսպէս՝ լոյս
է տեսնում մի գիրք թիւրքահայ բարբառով և մի
քանի ժամանակից յետոյ մի որ և է հրատարա-
կութեան «բաղնազէտ» ու բանիմաց քննադա-
տը արագ-արագ թիւում է իր գատողութիւննե-
րն ու գիտողութիւնները, որ կարող ենք մօտա-
ւորապէս հետեւեալ տողերում ամփոփել: Էրբ սա
նոր գրութեանը յօդուածատակ հեղինակ-էֆեն-
զին նորէն ցուցող որ թիւրքա-հայ բաղնազէտ գրա-

կան աստղներն վառ—աստղ մը ալ ինք է: Հրա-
շալի բանաստեղծի խօսքերն ու գատողութիւնը,
մտքերն ու դրացմունքը գեղեցիկ երկասիրութեան
ամեն էջերուն վերայ մերթ կը վլստան իբրև
գողտրիկ թիւթուած կամ գեղաձայն ծիծուած,
մերթ ալ եղեմական սքանչելի ծաղկանց բոյր
կարճիկն և կը հարեցունեն կապիցունեն պատ-
ւելի ընթերցողին և խորհրդաւոր մտքերով ծան-
րաբեռեալ քննադատին: Խորիմաստ, պատմա-
կան, իմաստասիրական, զեղարուեստական (և,
երբի, շատ այդպիսի «ական»-ն էր) ծանրակշիւ
ու հանձարեղ խորհուրդը ու դատողութիւնը ալ
չեն պակսիր, որ կը նմանին երկրի անհունու-
թեան: Ողջ գիրքն անմասն է իր տեսակին մէջ:
Մեծանուն մ'իս զու, չքնաղ երկնից և մարդ-
կային զգացմանց, տառապանաց ու ցանկու-
թեանց ոչ բերթող և վիպասան, վասն զի երկար
տարիներէ ի վեր քո անմահ գրչով դուն ազդիս
մեծամեծ օգուտներ մատուցիր և հրաչնիր ցու-
ցուցիր... և այլն, և այլն...

Ինչպէս տեսնում էք թիւրքահայ «բաղնազէտնե-
րի» համար դառնալ պոլսական Պարնասի դա-
ւաններ ոչինչ զգուշացուցիւն ու խոչնդոտ չը
կայ: Եւ միթէ արդէն չը կայ պոլսահայերի մէջ
այնպիսի կարծիք թէ նա, ով որ ծնունդ է Բու-
ֆօրի ափին և գրիչ ունի ձեռքը՝ չէ կարող բա-
նաստեղծ չը լինել: Արդարեւ, մէկը մի որ և է

Մի քանի իդէաներով պաշարւած երիտասար-
դութիւնը կեանքի և իրան շրջապատող ժողովրդի
մէջ նկատում է մի սառն անտարբերութիւն, մի
մեռելային անշարժութիւն, և դրա հետ միասին
թշնամական դիրք՝ դէպի ամեն մի գեղեցիկ նո-
րութիւն: Այդ տեսարանը համարեա միանգամից
խախտում են շատերի հաւատը, և նոցա ձեռքերը
թուլանում են: Դա մի կրիտիկական շրջան է,
որին ենթարկվում է ներկայումս մեր երիտասար-
դութիւնը: Այդ կրիտիկական պէրիօդի ազդեցու-
թեան տակ մի սարսափելի փոփոխութիւն է ընկ-
նում կեանքի մէջ նոր մասնող երիտասարդութեան
մէջ: Խակապէս այդ միջոցին ամենքի դէմքերից
հեռանում է դիմաւոր, և միջոց առ փոքր պարզ
կերպով սկսում է երեւալ թէ ինչ տիպեր են ներ-
կայացնում այն անձինք, որոնք ուսումնարանական
հիմնարկութիւնների պատերի մէջ եղած ժամա-
նակ խնայում էին օդը իրանց իդէաների ծը-
րազրկմամբ, իրանց անողորմ կրիտիկայով, իրանց
մեծ-մեծ ձգտումներով և ցանկութիւններով: Անց-
նում է մի, երկու և շատ-շատ երեք տարի, և
մարդ հանդիպելով նախկին ողորմող իդէալիստին,
զգուշանում է ճանաչել նրան: Մարդ զգու-
շանում է հաւատալ թէ իր աչքի առաջ կանգ-
նած ծանրաշարժ վաճառականը, կամ մեղաւ ծա-
ռայողը, կամ թէ մեծամիտ ազդեցիկատը նախկին
ողորմող երիտասարդն է: Խակապէս այդպիսիե-
րի խումբը ընկնելով գրպանի և դիրքի հարցի
ետեւից, միանգամայն մոռանում է իր անցեալը,
չէ ուզում ինչէլ անգամ այդ անցեալը, և անցեա-
լի բոլոր յիշատակները համարում է «չհիշու-
թեան յիշատակներ»: Սակայն մեր խօսքը
այդպիսիների մասին չէ: Մեր խօսքը գլխաւորա-
պէս վերաբերում է երիտասարդութեան և ինտե-
լիգենցիայի այն մասին, որը ուզում է, կամ իբրև
թէ ուզում է գործել կեանքի մէջ, և մասնակցել
հասարակական զանազան ինտելիգենցիայի մշակելուն և
արձարծիւուն: Հէնց դրանք են այն գործիչները,
որոնք ներկայումս զեկակարում են գաւառական
կեանքի մէջ մտաւոր և հասարակական գործերը,
և որոնք այս կամ այն մտքի արձարծիւ և պաշտ-
պանող պէտք է լինեն: Թողնելով մի կողմ այն
հարցը, թէ դրանք անձնութիւններ և անկեղծու-
թիւն ունենալով և միակողմանիութիւն և անկեղծու-
թիւն ունենալով, ուշադրութիւն դարձնելով միմիայն
այն գաղափարների և մտքերի վրա, որոնց գոր-
ծողութեան համար աշխատում է այդ ինտելի-
գենցիան: Այդ գաղափարները և մտքերը, կարե-
ւի է հաստատապէս ասել, շատ սահմանափակ և
անմշակ են: Մեր գաւառական ինտելիգենցիան

մինչև այսօր էլ չունի հասարակական գործունե-
ութեան որոշ ուղղութիւն, նա չունի որոշ հայացք-
ներ այն մասին, թէ ինչպէս պէտք է վերա-
բերվել ժողովրդին, ինչպէս պէտք է նայել նրա
կեանքի այս կամ այն կողմի վրա, կամ ինչ դիրք
պէտք է բռնել դէպի ժողովրդական կեանքի թե-
րութիւնները և դէպի դրանց արմատախիլ ա-
նելը:

Մի խօսքով մեր գաւառական ինտելիգենցիան
չունի հասարակական գործունեութեան մի փոքր
ի շատէ որոշ պրօգրամա: Այդ պատճառով անց-
նում են միմեանց ետեւից տարիները, և չը նայած,
որ այդ ինտելիգենցիան կարծում է, թէ մեծ ե-
ռանդով է գործում—այնու ամենայնիւ շրջապա-
տող կեանքի մէջ ոչինչ մի փոփոխութիւն չէ
նկատվում, և ժողովրդի մէջ չէ մշակում մի
նոր հայեացք կեանքի, ընկերութեան, ընտանիքի,
գաւակների կրթութեան և այլ այդպիսի ամենա-
կարևոր հարցերի մասին: Այդ արդէն ուղղակի
հետեւում է այն սահմանափակ մտաւոր դու-
լութեան, որի մէջ գտնվում է ինքը գաւառական
ինտելիգենցիան, այդ արդէն նրա միակողմանի
զարգացման նշանն է: Երիտասարդութիւնը միա-
կողմանի զարգացումով և շատ մոլթ հասկացո-
ղութիւններով մտնում է կեանքի մէջ, և այդ
կեանքի ազդեցութեան տակ էլ մի փոքր նախա-
պաշարվելով՝ իր ամբողջ գործունեութիւնը կենտ-
րօնացնում է մի քանի հարցերի վրա, մոռանալով
ամենազգաւոր ցուցերը և պահանջները:

Դուք պատահում էք գաւառական գործող ին-
տելիգենցիային և հետաքրքրութեամբ հարցնում
էք նրան.—«Ինչ կայ ձեզ մօտ. ինչ էք չինում».
անկասկած կարող էք հետաքրքրել տեղիկութիւն-
ներ հաղորդել: Եւ մարդ միշտ մի և նոյն պա-
տասխանն է ստանում:

Եւ համարեա միշտ այդ հարցերի շուրջն է
պտտում գաւառական ինտելիգենցիայի ամբողջ հե-
տաքրքրութիւնը: Նրա մտաւոր շուրջում, վիճա-
բանութեան և խօսակցութեան համարեա միակ
նիւթը փողակեր երեցիփոյն է, անարժան քահա-
նան և հոգաբարձական ուսուցչական ինտրիգա-
ները: Դրա պատճառն էլ շատ հասկանալի է.
գաւառական գործիչները գլխաւորապէս այդ
ինտելիգենցիայի են զբաղւած. նրանք գործունեութեան
ուրիշ ասպարէզ չը դիտեն: Խօսեցէք դրանց հետ
ժողովրդի կեանքի, ընտանեկան դրութեան մա-
սին, խօսեցէք ժողովրդի ընտանեկան վիճակի,
ընտրութեան, այս կամ այն խնդրի վրա ունե-
ցած հայեացքների մասին. խօսեցէք դրանց հետ
տեղական պարագայութիւն, արդիւնաբերութեան,

պարակախօսը կարող է չը հաւանել, մինչև իսկ
դէմ գրել և իրաւունք էլ կունենայ... վերջապէս
«որքան մարդիկ, այնքան կարծիք», ամեն մէկն
իր ճաշակն ունի:

Այս յօդուածի շարժառիթները մէկն է «Արե-
ւելի» այս տարեկալ մայիս 12-ի (թիւ 1005) հա-
մարում «Մասիսի» արտատպած մի գրութիւն,
որի վերնագիրն է՝ «Արդի հայ գրականութիւնն
ի թիւրքիս», «Հրատա Սատուր» ստորագրու-
թեամբ: Այդ երկար ու ձիգ յօդուածում հեղի-
նակն ուղղում է քննադատական մէկ ընդհանուր
ակնարկ գցել թիւրքահայերի գրականութեան
ծաղման և ընթացքի և հայոց աշխարհաբար լեզ-
ւի զարգացման վրա: Նա հաւատացած է, որ
թիւրքահայ գրողներից շատերը (գրեթէ ամենը)
զարգացրին (?) հայոց աշխարհաբար մինչև հե-
տեւեալ աստիճանը. «նորա լեզուն արդէն ձա-
րարութեամբ (?) որ յաճախ կը բարձրանայ մի-
նչև զբարբարի գեղեցիկութեանը, ունենալով միան-
շա մամայ աւելի պարզութիւն (?)»: Նա հաւատացած
է, որ թիւրքահայերը «իտրանցիկ կազմել աղբա-
լին նոր (!) գրականութիւն մը և յաջողեցան» (?):
Պարզօրով ու հպարտութեամբ նա ասում է
թէ, «մենք ունեցանք քերթողներ, վիպասաններ,
թատրոնագուներ, հրապարակագիրներ, թարգմանիչ-
ներ... և այլն... Մի խօսքով այդպիսի իմաս-
տուն քննադատական ակնարկ ձգելով թիւրքա-

և ուրիշ շատ այդ տեսակ նիւթերի վրա,—և դուք կը համոզվէք որ այդ ինտելիգենցիան համարեա չէ ճանաչում այն ժողովրդի ցարեքը, պահանջները և կեանքը, որի օգտին ինքը ցանկանում է գործել և չէ այդ է պատճառը, որ այդ գործելու ցանկութիւնը միշտ մնում է ցանկութիւն, և իրականութեան մէջ շատ քիչ արդիւնք է ցոյց տալիս։ Այդ տեսակ միակողմանի և մասամբ վերացական ուղղութիւնը աւելի մեծ արդիւնք տալ, ի հարկէ, չէր կարող և չէ էլ կարող տալ։

Մենք կարող ենք մասնացոյց անել և մի ուրիշ փաստի վրա,—ամենքին յայտնի է, որ մեր լրատւութեան գաւառական թղթակիցները պատկանում են այն գաւառական ինտելիգենցիային, որի օգտին ինքնապաշտօնական համարեա ամբողջապէս գրում է մեր պարբերական թերթերի մէջ։ և դրանք ամենքն էլ գրելու սէր ունենալով, իրենց տեսնում էք ահա իրենցից, Շուշուց, Ղալաբից, Նախիջևանից, Ալեքսանդրոպոլից, Աղսուիսից և ուրիշ տեղերից տեղական ինտելիգենցիային պատկանողները լցնում են խմբագրատունը անկերջանալի նամակներով, և այդ էլ այնպիսի նամակներով, որոնք զրկւած են վերին աստիճանի տեղեկացիայով և յուզմունքով։ Նամակները վերջանում են հետեւեալ խօսքերով. «այս դրուածքը հարկաւոր է անպատճառ հրատարակել. սրա ներքին գիտեմք է մանաւանդ է այստեղի համար»։

Խ. Մ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Յունիսի 22-ին

Ղարաբաղի ամենահին վանքերից հռչակաւորը, թէ իր նուրբ և գեղեցիկ ճարտարապետութեամբ և թէ իր պատմական նշանաւոր անցեալով, Գանձասարի վանքն է, որը գտնվում է խաչքան գաւառում, Շուշիից 40 կամ 50 կիլոմետր հեռավորութեան վրա։ Վանքը կառուցված է տասն և երկրորդ դարում։ Իր ժամանակին, ինչպէս յայտնի է, այդ վանքը Ղարաբաղի թէ պատմական, և թէ քաղաքական կեանքի մէջ ինչ դեր է խաղացել։ Այդ մասին նորից խօսելը իմ նպատակից բոլորովին դուրս լինելով, ուղում եմ միայն մի երկու խօսք ասել վանքի այժմեան քաղաքական դրութեան մասին։

Այդ հոյակապ և մեծահռչակ եկեղեցին իր նուրբ և միանգամայն հիմնալի քանդակներով ու ճարտարապետութեամբ այցելուին հրճուանք և հիացում է պատճառում, բայց ամիսս որ այդ պատմական յիշատակարանը այսօր միանգամայն քաղաքացիական և կործանվելու վրա է, իսկ ուշադրութիւն և խնամք տանող բոլորովին չը կայ։ Այսօր այդ մեծ հնութեան այցելուին կամ ուխտաւորը, դժբաղդաբար, ակնաւորապէս է լինում մի շատ ցաւալի տեսարանի. նա տեսնում է եկեղեցու դմբէթի և դրսի պատերի վրա ամեն տեսակ խոտեր բուսած, որոնցից ճեղքեր գոյանալով, չուր էր համար տեղ քացած, անարդէլ ներս է անցնում, և

հայերի գրականութեան վրա՝ դուրս է գալիս պարունակով, որ լրագրութիւն, հրապարակաւորութիւն, բանաստեղծութիւն, վիպասանութիւն, պատմութիւն, փիլիսոփայութիւն, գիտութիւն, ճանապարհորդական նկարագրութիւն... այդ բոլոր ճիւղերը թիւրքահայերի գրականութեան նիւթ են դարձել այս ամբողջ դարում ընթացում, արժանացել լուրջ ուսումնասիրութեան և առաջագիծին են։ Օ՛ պարզամտութիւն... Յետոյ այդ յօդաւորում կը կարգաւ երկայն շարքեր անուններ, որոնք ներկայացուցիչներն են այդ պարզ ու ճոխ գրականութեան։ Այդ անունների մէջ կան այնպիսիներ, որոնք երկար ու բարակ գրել են, բայց և ոչինչ չեն ասել ու հասկացրել. կան այնպիսիներ, որոնք մի քանի տասնեակ անհամ տասնաւորներ են գրել և բանաստեղծի անուն են կրում, կան և այնպիսիներ, որոնք մասով, հրապարակաւորութեան նշանակութիւնն ըմբռնած չը լինելով, այդ գործունէութիւնները վարկն ու արժանաւորութիւնը վաղ են գցել. կան ծակ փիլիսոփայներ, խաղի գիտնականներ, կոյր կամ սենականներ, նստած ճանապարհորդներ, շատախօս ու գրախօս վիպասաններ և այլն... Բայց ինչ

*) Մեծ հաճութիւնով մի քանի արժանաւոր անուններ են դուրս կը հանել թիւրքահայ գրողների այդ խուռն ամբարից...

դրանից, ի հարկէ, քարերը հետզհետէ մաշվում են, եկեղեցու դրսի և ներսի արձանագրութիւնները եղծվում են, այնպէս որ, եթէ այդ անտարբերութիւնը և անխնամ ու անտէր դրութիւնը շարունակվելու լինի, կարելի է վստահութեամբ ասել, որ շուտով վանքը բոլորովին կը քաղաքացի։ Տեսնելով վանքը այսպէս անխնամ դրութեան մէջ, մարդ ակամայ ինքն իրան հարցնում է, թէ ինչու այսօր հարուստ կալուածներ ունեցող վանքը, որի արդիւնքներով կառավարվում է Ղարաբաղի թեմական դպրանոցը, այսպէս անխնամ դրութեան մէջ պէտք է լինի, և ինչու համար, եթէ ոչ մի անգամից, դոնէ իւրաքանչիւր տարի չը յատկացնել մի փոքրիկ դումար վանքի վերանորոգութեան համար։ Միթէ վայել է դէպի մի այդպիսի վանք, որ անգլին վանքապատկան կալուածներ ունի, այս աստիճան անտարբեր մնալ և թողնել մի ծոլ վանահօր յոյսով միայն... Վանքը այցելած ժամանակս, երբ այս մասին մեղադրեցի վանահօրը, նա իրան այսպէս արդարացեց, թէ քանիցս անգամ դիմել է հոգևոր իշխանութեանը և հոգաբարձուներին, առաջադրելով վանքի վերանորոգութեան համար մի փոքրիկ դումար նշանակել, բայց թէ բոլորը «ձայն բարբառոյ յանապատի» է մնացել։ Որքան ճշմարիտ են վարդապետի ասածները, եւ այդ չը գիտեմ, միայն տխուր իրականութիւնն այն է, որ վանքը կարծես է անյապաղ վերանորոգութեան, մասնաւորապէս որ վանքը չունի մի փոքր ի շատէ յարմարաւոր օթեան, մի անեակ, որտեղ կարողանար յոյնած ուխտաւորը հանգիստ ու ապստով գիշերել, իսկ այդ փոքրիկ յարմարութեան մասին վանահայրը չէ մտածում։ Եւ վերջապէս ինչ չափ կարող է ունենալ վանքի քաղաքացիացի նոյն ինքը Շուշու թեմական դպրոցը. եթէ այսօր հոգաբարձութիւնը խնայում է մի քանի բուրդիներ ծախսել վանքի վերանորոգութեան համար, պէտք է գիտենայ, որ դրանով նոյն իսկ դպրոցի նիւթական աղբիւրները ցամաքեցնելու ճանապարհ է բաց անում։ Գոնէ այդ մտաւեցնողը նոյնիսկ մեր վանքական կալուածների կառավարողները այդ հարցի վրա, եթէ որ ընդունակութիւն չը կայ արևուր կործանումից պահպանել անցեալ կեանքի փոքր ի շատէ ուշադրութեան արժանի յիշատակարանները։

Կ.

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԿԱՆԻՅ

Յունիսի 14-ին

Այսօր, կիրակի օրը, հանդիսաւոր կերպով Աղաբաբեան քաղաքապետին հիւրը դրվեցաւ։ Մարթնը սկսվեցաւ ժամը 12-ին և վերջացաւ 12½-ին։ Հանդէսը իրանց ներկայութեամբ պատկէ էին՝ փոխ-նահանգապետը, քաղաքապետը, քաղաքապետը և խուռն բաղմութիւն, մեծ մասամբ ուսուսանողներ։ Աստուծոյն հայերը իրանց բացակայութեամբ էին փայլում։ Ներկայ եղողներին մատով կարելի էր համբել։ Ո՛ւր էին մեծ հայ աստուծոյն խնայելը, ուր էին հայ տիկիները և օրիորդները։

անես. թիւրքահայերը կարծում են, որ դրանցից մէկն իրանց հայ վիկտոր Զիլգոն է, միւսը՝ Միլաւս, երրորդը Ռօշֆօր, չորրորդը՝ Պաստեօր և այլն...

Ամեն-մէկը մեծ ու հանճար, Ամեն-մէկը գիտնական.... Տէր իմ Աստուած, արա մի ճար. ի՜նչ ենք անում ցաւ այդքան...։

Արդարեւ, կամ պէտք է չափ ու շատ քիչ պահանջել գրականութիւնից և կամ ընդունած լինել ինչ որ գրվում է մեր մէջ (չու կամ վատ—ողջ մէկ է)՝ գովաբանել՝ նշանաբանը, որ պօլսահայ «քննադատներին» (!?) հայեացքն ունենալ թիւրքահայերի գրականութեան մասին։ Գնահատել ու խօսել ամեն տեսակ նիւթերի վրա (մասնաւորապէս իրենցիկ մասին), ուշադրութեան հարձակումներով այն հանգամանքը թէ՛ արդեօք ծանօթ եւ խօսակցութեան նիւթն է, թէ ոչ, և նախադասել ու խօսել վայր ի վայր, թիւթ և կերպով, առանց ըմբռնելու նիւթի բուն իմաստն— ահա ընդհանրապէս պօլսահայերի գլխաւոր յատկութիւններից մէկը։ Առողջ լօգիկայի, արամաբանութեան, կրիտիկական ոգու և զարգացողութեան պակասութիւնը նրանց մէջ զգալի է։ Պահանջում են շատ քիչ և անուժ շատ քիչ, բայց երբեք են թէ այս կամ այն ճիւղի մէջ իրանց

Սրանք թուով մօտաւորապէս 10 հոգի էին։ Ո՛ւր էին Աստուծոյն մեծախօս երկասարգները, ինտելիգենտները, ինչու չէին բարհաճել յարգել իրանց ներկայութեամբ այդ հանդէսը։ Ի՜նչու ըստարեւելք այս. կիրակի օր, խառնութիւնը փակ, որովհետեւ մինչև ժամը մէկը կիրակի օրերը խառնութեամբ իրաւունք չը կայ, ինչու, ուրեմն, չէին եկել։ Արդեօք զարմանալի չէ, երբ տեսնում էք, որ ուսուսանողները հետաքրքրվում է հայի հանդիսով և բաւական քանակութեամբ խոնարհ են այդտեղ,—իսկ հայը, որի բարոյական պարտքն էր իր ներկայութեամբ յարգել այդ հանդէսը, ընդհակառակն փայլում էր իր բացակայութեամբ։ Երբ մենք յարձակվում ենք նրանց վրա և ամենայն իրաւամբ յանդիմանում ու թող կողմերը երևան հանում,—մեղ վրա նեղանում ու բարկանում են։

Հանդիսականները համար բացված էր սեղանը։ Առաջարկվեցաւ թագաւոր Կայսրի, կայսրիկոսի, նահանգապետի, հոգաբարձութեան և այլ կենսացների թէև հոգաբարձուները ուղում էին կատարել Աղաբաբեանի հոգեհանգիստն էլ, բայց եկեղեցիների բարեկարգիչը հակառակվեցաւ, ասելով որ տան հիւրի վրա հոգեհանգիստ կատարելը անպարմար է. եթէ հոգաբարձուները ցանկանում են հոգեհանգիստ կատարել, կարող են եկեղեցում կատարել տալ։ Հանդէսը վերջացաւ ժամը 1-ին։

Այս տարի հայոց օրիորդական ուսումնարանում իրանց ուսուցիչ աստուծոյն 11 օրիորդներ։ Նորաւարտուհիները նպատակ ունեն հիմնել «ընթացակար» ընկերութիւն, իրական սեռի մէջ ընթերցանութիւն տարածելու համար։ Նրանք սպասում են սրբազան Սուրբհանգի դալուն։

Յ. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԻ

Քանի մի օր չարուսակ անձրեային եղանակ ունէինք թիֆլիսում։ Այն օրերը երբ մեղ մօտ անձրե էր գալիս, ԿՕՁՈՐՈՒՄ, ինչպէս պատմում են, շատ ցուրտ էր անում։

Մենք լսում ենք որ այս օրերս հասել է թիֆլիսի հայ-կաթոլիկ մի վարդապետ, որ պատկանում է Միլիթարեան ուխտին։ Ասում են որ յիշեալ վարդապետը քաղաքի պաշտօն պիտի ստանայ մեր քաղաքի հայ-կաթոլիկ եկեղեցում։

Այս օրերս մի սարսափելի դժբաղդութիւն էր պատահել Կօջորում։ Տային սօվետիկ Պեչուրովը քոյրը և որդին վերադառնալով կառքով պ. Ալի-վիլիզու տանից, ձիաները կատարեցան և տարան կառքը։ Ալի-վիլիզու երեւո որդիք, որոնք նոյնպէս կառքում նստած էին, կարողացան կառքից թռչել, իսկ Պեչուրովը քոյրը և որդին կատարեալապէս ջարդվեցան և նրանց դառն ճանապարհի վրա արեւմտալեզուներ։ Օրիորդ Պեչուրովա մի քանի բազմեց յետոյ վախճանվեցաւ, իսկ պ. Պեչուրովը

արածը բաւական է ու շատ և հետեւաբար առժամանակ կարող են գցել խարխիւլ և «գոյնաւոր» վատակալ խառնութիւնից։ Եւ յետոյ հանգիստ առնել։ Չը հասած ոչ մի բանի նրանց թուում է թէ հասել են ամեն բանին։ Չունենալով ոչ մտաւոր և ոչ բարոյական բաւականաչափ պահանջ, նրանք իրականաբար են համարում անկատարը։ Գրանցից առաջանում է այն, որ գիտութեան անունը տուող ու գրող թիւրքահային գիտնական են ասում. հրապարակաւորութեան մէջ մտնողին,—ի՜նչ նա դրա համար աննշանակ ու անընդունակ ողջ մէկ է,—անուանում են հրապարակաւոր, բանաստեղծութեան ու բանաստեղծների անուն տուողին և անձուշի տասնաւորները գրողին բանաստեղծ անուն են տալիս և այլն... Այնպէս որ դրանից յետոյ կարելի է եզրակացնել թէ՛ այս կամ այն թիւրքահայը իրականաբար գրողի անուն է կրում ոչ թէ նրա համար, որ իրականաբար լուսաբանում և զննում է գիտնական վերաբերակ զանազան ինտելիկներ, այլ զիտնական գրող կոչվում է այն պատճառով, որ նա որ և է գիտնական գրող փորձելով թարգմանել փաշայի, աղապարի և նրա պարունակութիւնը, կամ երբեմն նա գիտութեան անուն է տուել և նրա մասին ծակ փիլիսոփայութիւններ արել։ Նոյնը և բանաստեղծ անուն վերաբերութեամբ, եթէ այս կամ

չորովի տղան շատ ծանր կերպով վերաւորված է։

Սերը հոգի հայ ուսուցիչներից դիմում են մեղ հետեւեալ նամակով։ «Պ. խմբագիր. Մանկավարժական դործի առաջադիմութիւնը պահանջում է որ մի և նոյն ուսումնարանի ուսուցիչները ունենան նման ուղղութիւն թէ դասաւարտական և թէ ընդհանրապէս, համադրունքների և ձգտումների մէջ։ Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով կը կամենայինք երեքս էլ զանալ ուսուցչական պաշտօններ մի և նոյն դպրոցում, որովհետեւ լաւ ճանաչելով իրար, գիտենք որ ունենք համարեա մի և նոյն ուղղութիւնը մանկավարժութեան դըլխաւոր կէտերում, ուրեմն միասին, մի տեղում գործելով աւելի շատ օգուտ կարող էինք բերել հայ մանուկներին, քան թէ բաժան բաժան գործելով։ Մեր երեքս անունները և հասցեն յայտնի են խմբագրութեանը»։

Այս օրերս լոյս տեսաւ Թիֆլիսում պ. Բաֆիլի «Կայծեր» երկրորդ հատորը. այդ դրքի առաջին հատորը, ինչպէս յայտնի է, լոյս է տեսել արդէն մի քանի տարի առաջ։ «Կայծեր» երկրորդ հատորը, որ բաղկացած է ամբողջ 722 մեծադիր երեսներից, պարունակում է իր մէջ, բացի վիպական մասից, տեղագրական, աղագրական և մանաւանդ նկարագրական հարուստ նիւթ, չօշափելով մի և նոյն ժամանակ ներկայաւոր հայերի մէջ հասարակական թարմ նշանակութիւն ունեցող շատ ինտելիկներ, ինչպէս են պանդխտութեան, տընտեսագիտական, զարոյցական, կրօնափոխութեան խնդիրները և այլն։ Անկախած ընթերցող հասարակութիւնը կը շտապի կարդալ «Կայծեր» երկրորդ հատորն էլ, մանաւանդ այդ դրքի առաջին հատորն և «Պաշտօնի յիշատակարանը» կարդալուց յետոյ, որի հերթները «Կայծեր» երկրորդ հատորի մէջ նորից հանդէս են գալիս։

ԴԵՐԵՆԻՆԻՅ մեղ գրում են, որ այնտեղի ընթերցարանը շատ անախաճակի գրութեան մէջ է, այդ պատճառով համարեա ոչինչ օգուտ չէ տալիս հասարակութեանը, և չէ նպաստում ընթերցանութեան տարածվելուն։

Մտադրութիւն կայ Թիֆլիսի Հաւաքար կոչված թաղում մի աղատաւորան հիմնել երեսների համար։ Աղատաւորանի համար հարկաւոր փողը, ինչպէս հաղորդում են տեղական ուսուսանողները, պէտք է հաւաքվի հանգամանակութեամբ, իսկ աղատաւորանի շինութեան համար թիֆլիսեցի պ. Յ. Ծովեանեան նուիրել է 500 սամէն դեմին։

Այս օրերս ստացանք Պետերբուրգում ներկայ 1887 թիւին հրատարակված և ի. Ն. Սկորոխոօ-վի տպագրանում տպված չորս փոքրիկ զրբոյկներ հայերէն լեզուով 1) Ուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում, 2) Բոլոր աղաղակապետ, 3) Ժաննո տ'Ալքը, Գաղղիացի աղաղակ, 4) Նիդա, տառիկ պատմածը։ Այդ չորս զրբոյկներն էլ թարգմանութիւններ են օտար լեզուներից, իսկ նրանցից մին, «Ժաննա տ'Ալք»

այն թիւրքահայը բանաստեղծ է համարվում, դա նրա համար չէ, որ նա իսկապէս ունենայ բանաստեղծական ոգի ու տաղանդ, այլ այն պատճառով, որ ոտանաւորներն է գրել, որոնց մէջ կարմիր վարդի, կապուտ երկնքի, թիթեռի, սուխալի, սիւրի, կոյսի և վերջապէս նոյն իրեն չընաղ Բօսֆօրի անուններն է տուել և տաղաչափութեան ոտերի մէջ միաձայնութիւն է գտել... Այդպէս է և թիւրքացի վիպասանը, և հրապարակախօսը և այլն...

Գրականութեան մասին այդպիսի բացասական հակացողութիւնը և այդքան քիչ պահանջը նրանցից՝ տանում են դէպի գրական յետադիմութիւն. այսինքն ստեղծվում է այնպիսի գրականութիւն, որ բացի ամեն տեսակ պակասութիւններից՝ ուրիշ ոչինչ չէ պարունակում իր մէջ և բացառաւորապէս աղգեցութիւն է ունենում ժողովրդի մտաւոր ու որոշ կերպով ըմբռնել գրականութեան նշանակութիւնն ու դերը և յետոյ առաջ բերել ու զարգացնել կրիտիկական հայեացք ու զատողութիւն նրա վերաբերութեամբ։

(Կը շարունակվի)

Ի՞նչ Պոլսի բարբառով է թարգմանված: Կնչպես երևում է հրատարակիչները նպատակ ունեն ժողովրդական գրադարան կադմիսլ այդ տեսակի փորձի բնույթներին և մասամբ, մեր կարծիքով, կարող են աջակցություն զանել, եթե այդ ուղղությունում շարունակեն: Նախ՝ դժվար չափ մասնակցություն է ամենքին, այն է 5 կոպեկ իւրաքանչիւր բնույթի համար, երկրորդ՝ նիւթը շատ հասկանալի է ամեն մի ընթերցողին և գրաւիչ, վերջապէս լեզուն էլ այնքան իրթին և արուեստական չէ, ինչպէս լինում է մեր հայերէն թարգմանությունների մեծ մասի լեզուն: Մասնաւոր դեղեցիկ և արտաշարք է «Նեղա» վիպիկը: Մի քան բարդ ժողովրդական գրադարաններին այն զբոսականը, մեր կարծիքով, աւելի մօտ են այն նպատակին, որին պիտի ձգտի ժողովրդական գրադարանը: Էթանությունը, ընտիր և գրաւիչ վիպական նիւթը, բաւական լաւ լեզու մի կողմ, իսկ միւս կողմ դեղեցիկ տպւ և ընտիր թուղթ,—այդ բոլորը մեծ արժանաւորութիւն է ժողովրդական գրքերի համար:

Ստացանք ՀՈՒՀՈՒՄ հրատարակված «Ղեդրդ Ստեփնոսն» վերնագրով զրբոյլը, որ ուստիք-
նից, Վ. Օ. Գօրնիից, թարգմանից Մերզա Տէր-
Սարգսեանց: Գրբոյլը արժէ 20 կօպէկ և տպված
է ներկայ 1887 թւին Հոսշու հայոց հազար տես-
չութեան տպարանում: Գրբը բերել տալ ցան-
կագօրծոյնը կրորդ են դիմել հետեւալ հասցեին:
Սիւսա, книжный магазинъ бр. Дадіанъ, կամ
իրան հեղինակին Սիւսա, Мирзѣ Теръ-Сарксянцѣ.

ՆՈՐԱՆԱԽԻՋՆԻԱՆԻՅ անդ հեռագրում են յուհի-սի 28-ից հեռահալը: «Այսօր Բաֆայեյ. Պատկահեան թողնելով Վոք-Դափիյնան, ուղևորվեց ղէպի թիֆլիս: Ասում են որ նա այս ամառը ղիսաւորովին ունի ճանապարհորդել Անդրկովկասում և թիրքաց Հայաստանում»:

Այս տարբեր թիֆլիսի Ալեքսանդրեան Ուսուցչական Ինստիտուտում աւարտեցին 27 երիտասարդներ ըստ զարգային զարոցների ուսուցչի կոչումով: Սրանցից 10 հոգի ուսմանը են, 9 վրացիներ, 4 հայեր, 3 թուրքեր, և 1 յունական ուղիայի: Հայերն սրանք են. Ջ. Տեր-Գրիգորեանց, Ս. Զիլեհանց, Պ. Տեր-Խաչատրեանց և Գ. Բաղդասարեանց:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հետևելով այն բոլոր տեղեկություններին, որոնք վերաբերում են թիւրքաց Հայաստանի մէջ բնակվող երեք միլիոն հայ ժողովրդի կեանքին, գծուար չէ այն եկրակացությունն համեմել, որ այդ ժողովրդի թէ մտաւոր և թէ տնտեսական կեանքը աւելի թրւանում է, փոխանակ նոր ոյժերով կադրուրելուն Թողնելով մի կողմ այն բոլոր իրողութիւններն, որոնք կատարվում են թիւրքաց Հայաստանի սահմաններում, և որոնք հրապարակէն դուրս դալւի, րաւական է միայն աչքի առաջ ունենալ այն մի քանի նկատողութիւնները, որոնք լըյա են տեսնում մամուլի միջոցով, և այդ էլ բաւական կը լինի այդ տիտոր համոզմունքը կադմելու: Տնտեսապէս ժողովուրդը ճնշվում է. սարուակելի պանդիտութիւնը ջլատում է նրա ոյժերը, և այդ ծանր հանգամանքներին հետ միասին ժողովուրդի մէջ թրւանում են և այն բարոյական ոյժերը, որոնցով նա կարող կը լինէր պահպանել իր գոյութիւնը. թիւրքաց Հայաստանի մէջ հայ ժողովուրդը ոչ թէ միայն զրկվում է իր հողից, բաժանվում է իր ճնշալայրից, ալ և քիչ քիչ կորցնում, մոռանում է իր մայրենի լեզուն, որի փոխարէն նա թէ հրապարակում, թէ ընտանեկան կեանքի մէջ իսկ, սկսում է գործածել թուրքերէնը կամ մի ուրիշ լեզուն: Լեզուն մոռանալով այդ ժողովուրդը անգիտակցաբար մոռանում և զրկվում է շատ աղնպիտի յատկութիւններից, որոնք պահպանել են նրա ինքնուրոյնութիւնը: Մայրենի լեզուի մոռանալը թիւրքաց Հայաստանի մէջ շատ աւելի է տարածված, քան թէ կարելի էր կարծել. րացի մի քանի կենտրոնական տեղերից, միւս բոլոր տեղերում, թէ դիւզական կեանքի մէջ, և թէ քաղաքներում, հայերը շատ քիչ են խօսում իրանց մայրենի լեզուով. իսկ շատ տեղ չը գիտեն ի՛նչ իրանց մայրենի լեզուն: Այդ մի դառն, րացի անհրճելի ճշմարտութիւն է: Այդ

դառնն ճշմարտութիւնը աւելի ծանր նշանակաւ-
 թիւն է ստանաւմ մանաւանդ այն պատճառով,
 որ նոյն իսկ այսօր, ոչ թիւրքահայերի զպրօցնե-
 րը, և ոչ էլ ուրիշ զանազան կրթական հիմնադ-
 րութիւններ համարեաւ չեն նպաստում մայրենի
 կեդրի տարածմանը, չպահեն լեզուի վերականգ-
 մանը: Գոհե՛ այդ նպատակին ծառայէին ուղղակի
 կերպով թիւրքաց հայերի զպրօցները, եթէ չնն
 կարող նպաստել երկրի անտեսական դարգացման
 գործին, որի մասին շատ անգամ աւելի է եղել
 յիշեաւ: Բայց այդ նպատակին ձգտելու համար,
 հարկաւոր էր, որ զպրօցները թիււ շատանալու, և
 ոչ լինէ մէկը միւսի ետեւը փակկէր, ինչպէս որ
 այդ վերջին է այժմ: Տեսեսական ամենանեղ վի-
 ճակի մէջ զսնվող ժողովուրդը մոռացել է իր
 լեզուն, և նա, ի հարկէ, չէ կարող հասկանալ ե-
 կեղեցում որ և է կրօնական խօսք, նա, ի հար-
 կէ չէ կարող հետաքրքրվել այն բոլորով, ինչ որ
 զրկում է իր մայրենի, բայց իրան անհասկանալի
 լեզուով, նոյն իսկ իր սրտին ամենամօտիկ ցաւե-
 րն և խնդրանքներ վերաբերովթեամբ:

ՆԱՄԱԿ ԳԱՐՄԿԱՍՏԱՆԻՑ

Դաւրէժ, 16 յունիսի

Արամեան դպրոցի հարցազննութիւնը սկսվելով յունիսի 1-ից վերջացաւ յոյն ամսի 14-ին: Այս տարի Արամեան դպրոցը մեծ յաւաքադիմութիւն էր արել: Հնորճիւ աշխատասէր ուսուցիչներէ: Աւարտողները միայն հինգ հոգի էին, որոնք այս տարի աւարտելով դուրս կը գնան, ըսյց դժբաղդաբար բոլոր սովորածները կը մոռանան, որովհետեւ այստեղ դրօշկու ասպարէշ չը կայ, որպէս զի աւարտողները կարողանան իրանց գիտցածի մի մասը գործածելով առաջանալ: Այստեղի հասարակութեան սովորութիւնն է ասել. «Մինչև օրս 30 տարի է մեր ուսումնարանից մի դիմաւորան աշակերտ դուրս չէ եկել»: Արամե թէ ուսումնարանում աշակերտ առննալէտ պէտք է լինի ու աշնպէս դուրս գայ: Ճիշդ է, Արամեան դպրոցը 30 տարուց աւելի է, որ դպրութիւն ունի, ըսյց հալիւ 10 տարի է, որ փոքր ինչ կարդ ու կանոնի տակ է: Աշակերտը հալիւ վարժ կարդալ ու դրեւը սովորում է, նրա հայրը դուրս է բերում դպրոցից և տալիս է արհեստի: Գիւղացին բերում է իր որդուն քաղաք, զնում է վարցը և յոյնն է անում, ինչ որ քաղաքացին: Մեղաւոր չէ ոչ դիւղացին, և ոչ էլ քաղաքացին, որովհետեւ, ինչպէս վերը խնցիկ, չը կայ մի ուրիշ գործ բացի արհեստից և աշակերտն էլ արհեստ սովորելով, ի հարկէ, կը մոռանայ իր սովորածը և այդպիսով ի դուր կը կորչի Արամեան դպրոցի արդիւնը:»

Օրիորդայց դպրոցի վարժուհի Խ. Վարսենյիկ Զակովլենայց հոյն դպրոցի առաջարկմամբ հան մեծ դարկ է առել: Այստեղի կանանց ընկերութեան հիմնադիրը հա է եղել, որով կարողացաւ օգնել բողոքականների դպրոցից բերված չքաւոր աշակերտներին: Բողոքականների դպրոցում դուռ էլի կան մի քանի հայ ուսանողներ, որոնք անուռով միայն բողոքական են և եթէ օգնող լինի նրանց, չուտով դուրս կը դան բողոքականների դպրոցից: Միսինարները իրանք աշակերտներին վարձում են և նրանց մի բան թույլատրէն սովորեցնում են, որպէս զի ըննութեան ժամանակ ուսմիկներին դարձաբանել, բայց այս տարին նրանց չաջնայցից մեզ դարձանցել: Արամեան ղըպրոցի տեսուչ Կ. Զակովը կարգապետանց գնում է զոցա ալ դէբրայի հարցաքննութեանը և հարցոց է առաջարկում աշակերտներին, բայց ոչ մէկը նրանցից պատասխանել չէ կարողանում, իսկ պ. Վահանը (նոցա ալ դէբրայի ուսուցիչ) յաճախ կրկնում է. «ժամանակը լրացաւ» և այդպիսով աղատվում է պ. կարապետեանի ձեռքից:

Վ. Տ. Օ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Պօլսից հեռագրում են, որ Բ. Դուռը պահանջել է դարձնել մի առժամանակ յետաճգել երկպառակն դաշնադրի հաստատութիւնը: Լ'օնդոնի քաղաքական շրջաններում կարծում են, որ սրդ դաշնագիրը կարօղ է տարաձայնութիւններ ստեղծելու, ուստի և Անգլիան պէտք է այժմանակից որոշի իր անեկըը:

—Հուսմի պատը, ինչպէս հաղորդում են իտա-
ական լրագիրները, չէ համաձայնվում ներկայա-
յուցիչ ուղարկել իրյանդիա, քաղաքական նպա-

տակնեորով: Վապի ալը ցանկութիւնը հիմնված է այն կարծիքի վրա, որ յայտնել են իրաւագալան կաթօլիկ հոգևորականութեան Դերկապացուցիչները, թէ դեռ վաղէ ևս յարմար է որ այսպիսի յուզված ժամանակ վատրկաբան խառնվել իր- յաւանական քորների մէջ, որոնց պատգանները վճռել են ամենախիստ միջոցներէ դիմել:

— Ինչպես արևում է, երկպառական դահնադիր հաստատությունն լուրը աղմուկ է զցկել Պոլսի մասնատական ազգաբնակչության մի մասի մէջ։ Աւատրիական լրագրիչները տեղեկութիւն են ըստացել Պոլսից, որ այդ առիթով սուլթանի դէմ շատ յուզված են։ Այժմ պալատի պահպանութիւնը, իբրեւ ինքն, այդ պատճառով սաստկացրած է, որ պահպանան մոլեռանդութիւնից միշտ ապահով լինելու համար։

—Յօժնիքի 12-ին թարգմտված կայացած «Հայրենասերներին միություն» միությունը, որին ներկայ էին մինչև 3,500 մարդիկ: Միությունը ժամանակ տեղի ունեցան շատ ճառագոստություններ և ցույցեր: Ամենից առաջ խօսեց Գեորգեյը, և իր ճառի վերջում զովասանական և ոգևորված խօսքերով նկարագրեց Լեյպցիգում դատապարտված հայաստանի ամենադիպլոմատները: Միությունը ժամանակակից ամենադիպլոմատները ցույցեր արեցին և ի պատիւ զենքավ Բուլանժեի:

— Վրէննայից հեռագրում են, որ Լյուբուրգի իշխանը, ինչպէս երևում է մի քանի տեղեկութիւններից, չէ հրաժարվել բուլղարական զահր բարձրանալուց:

—Հռոմից դրում են, որ վխտիկանը արդեն հրատարակեց մի չըջաբեբական, որ վերաբերում է պապի մարմնաւոր իշխանութեան խնդրին: Իսաաւական լրագիրները կարծում են, որ պապի այդ պատգամները պատշաճանութիւն է դնում մի օտար պետութեան մէջ, որը առ այսօր զեռութադնկան է մտում:

— Բոլորարական նախկին գործիչ, Կարավիելով, որ վերջին ժամանակներում բանտարկված էր, արձակված է բանտից: Կնչպէս հաղորդում են արտասահմանական մի քանի լրագրիչներ, Կարավիելովի առողջութիւնը միանգամայն խանգարված է բանտի մէջ մնալուց:

—Միշտն թագաւորը, ինչպէս զրում են Վիէննայի լրագրէրները, ամենամօտիկ յարաբերութիւններ է հաստատուել Աւստրիայի հետ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Աղշիկների առևտուրով» պարագլերը հրճանքի համար, ինչպես երևում է, շատ չափաւէ է երևում: Հարաւաստի Ռուսաստանի զոհապահ կողմերում շատ անպահ է են ձկնախաղիչը հրճանքի, որոնք պարագլում էին աղշիկներ զախցիներով, միւս ժառանգ ղէպի Պոլիս: Աղշիկի մի երկուսը պահի նկատելի է և Աւստրիայում, բայց առեկը զորամանկին այն է, որ այդ մարդիկ Աւստրիայից աղշիկներ են տանում նոյն իսկ մինչև հեռու իրազիլիս: Աւստրիայում ոստիկանութիւնը այսին է խիտ միջոցներ ձեռք առնել այդ բանի դէմ:

* *

Չիկագոյի փոքրիկ թատրոններէջ մէկում պէտք է ներկայացուէր Շէկսպիրի «Համէտը»: Երբ հասարակութիւնը հաւատած սպասում էր վարպետի ըզգլի բացկուէում, ըէժիսարը դուրս եկեալ ընծի է հարկէ, սպիտակ ձուռնոցներով և Գրախով, և յայտնէ, որ այն ըրասանով, որոս պէտք է կատարէր Համէտի ըբեր, այժմ նիստ ունի դատաւանում, իրեն երդուեալ զատաւոր, և որովհետո ներտարանը փակվելոցն սիւ ըանի ըրոպէ առաջ զարկալարէին նոր փաստի զործի վերաբերութեամբ, Ոստի նիստը կը շարունակվի մինչև կէս ղիշեր: Ապա պատճառով ըէժիսարը կամեցաւ իմանալ հասարակութեան ցանկութիւնը, ըէժ արդիւն ուղում էն սպասել երդուեալ-Համէտի վերադարձին, թէ համաձայն էն, որ Համէտը ղերը բոլորում էին ղուրս ղզգլի: Հասարակութեան միմաստատուութիւնը ղղերը դուրս ղցելու՝ կոլմն էր, և սպոյխտով «Համէտը» իսպաղցին առանց... Համէտի:

Եւրօպայի մի լայնի ճանապարհորդներ հետա-
քրքրի տեղեկութիւններ են հաղորդում Աֆրիկայի
մի լայնի կողմերի տեղական սղօղաբանական
մասին: Ղօթորս Վօլֆ իր ճանապարհորդութե-
ան յետոյ հաղորդում է հետևեալը Վոնդրի արեւ-
մում բնակիչների մասին հետեւեալը.—բարձր-
ահի զիւղերում արարող թէ տղամարդոց և թէ
կանանց հասանք հազիւ հասնում է 1,⁴⁰ մ: (1
նետրը = 1,⁴⁰⁶ արշինին): Այդ թղօլիները պարա-
պրդում են դիւկաւորացւոյ որսորդութեամբ և չառ-
մուտ են վարել անասուններ բռնելով: Թղօլի-
ները ունեն դեղնաագոյն մազեր, ըրդի նման, թը-
ղօլիներին մի գեղղի պատկանողներին երեւի վրա
սպին մազ չէ բուսնում: Մի ուրիշ գեղղի պատկա-
նողներին միտուքները այնքան երկայն են, որ նը-
սանք իրանց միտուքները ծամելի նման են հիւ-
մում:

Փարիզում սկսում է տարածվել Բիզոֆոն կոչված նուագարարը. այդ նուագարարին վրա ամենևին համար հարկաւոր էլ չէ նստաւ իմանալ, կամ ունենալ երգելու մեծ ընդունակութիւն, հարկաւոր է միայն երգել մի որ և է երգ գործիքի մէջը, և ինքը գործիքը յետ է տալիս երգումը շատ նման կերպով: Այդ գործիքը, որ շատ յարմար էր անուանել արագաձայն, կոչվում է Բիզոֆոն, հնարդին ինչոքի անունով:

Տիէզդիպի քաղաքները մէկը պարծնեում է այ-
ժմը, որ ինքն է եղել առաջին անգամ իր դըզ-
դանները մեջ Ալօպպիկի (Համալիսարայան) լե-
զու՝ դասաւորութիւն ստացնելը։ Զաղդիբիով այդ
լուրը, չմէզակնս լրատիրները աւելացնում են,
որ Ալօպպիկի դասաւորութիւնը պարտաւորա-
բար ինչ լինի այդ քաղաքի զգրութեանբով։

Անգլիացից վիկտորիա թագուհու յիսնամեայ յարկեանի առիթով լոնդոնում լոյս տեսան բազմաթիւ դրբեր և բրդօրհներ, որոնք տրուիված են թագուհու կեանքին: Ի միջի այլոց լոյս տեսան և մի քանի ծիծաղելի դրբեր, այդպէս, օրինակի համար, մի նկարիչ հրատարակեց մի ալբոմ, որի վրէ դրսեւորած են վիկտորիա թագուհու յետուն տարւոյ ընթացքում ունեցած բոլոր չների պատկերները, նրանց «կենսագրութեան» հետ միասին: Մէ տիկին հրատարակեց վիկտորիայի 50 տարւոյ ընթացքում հազած բոլոր չորերի ալբոմը:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏՏՐՈՒՆԻՔԻ, 27 յունիսի: Արդարադատութեան
մինիստրութիւնը ենթադրում է մտցնել դատա-
տանական ըէֆօրմա թալտեան նախնընկերում,
այն զանազանութեամբ որ հատարար դատաւոր-
ները նշանակվելու են կառավարութիւնից:

ԿՈՒՈՒՐԳ, 27 յունիս: «Koburger Zeitung»
լրագիրը ուշադրութիւն է դարձնում այն հան-
գամանքի վրա, որ Կօլորպոեան իշխանի պէս
գերմանական իշխանը իրաւունք չունի առանց
տան զինաւորի թոյլտւութեան և առանց գեր-
մանական կայսրի համաձայնութեան, ընդունել
իրան առաջարկած թաղը:

ԼԵՊՈՅԻԳ, 27 յունիսի: Գննելով պետական
դատաճանուցիկան գործը, կայսերական դատարա-
նը դատապարտեց Կէյն և Գրէքէրտ մեղադրված-
ներին իրաւունքներէջ զրկվելուն և առաւ տարվայ
բանտարկութեան:

ՏԻՌԵՍՈՒԹ, 27 յունիսի։ Կոբուրգեան իշխանը
Հնորճապաղութիւն յայտնեց մեծ աղբայրն ժողովին
իր անձին ջրաց տուած վստահութեան համար և
պատրաստականութիւն յայտնեց զալ Բաղբարիա,
հէնց որ իւր հետբողութիւնը վաւերացրած կը լինի
ն. Կրսան կողովի և ճանաչված մեծ պետութիւն-
ներէն։ Բողոսլալօվի մինչևտբողութիւնը դիտառո-
րութիւն ունի հրաժարական տալ, ըսցց այդ
հարցը դեռ ևս վճռված չէ։

ՍԻՄԻԱ, 27 յունիսի: Ազգանական աղբյուրից հաղորդում են, որ Գօլամ-խայդէր-խանի զօրքերի և գլխավորների մէջ տեղի ունեցած վերջին ճակատամարտի ժամանակ գիլղանքը կորցրին 370 հոգի, որոնցից 300 սպանված են, իսկ 70 վիրավորված: խօստում ապամարտվածը վերջացրած է:

ՕԴԵՍԱ, 27 յունիսի: Սերբիական թագուհին
իր որդու հետ այսօր ուղևորվեց դէպի Սերբիա:

ՏԻՐՆՈՎՈ, 27 յունիսի: Ինչպես արդեն հա-
ղորդված էր, մինիստրով՝Խնը հրաժարական տը-
նեց: Այսօր մինիստրով՝Խան օրինակյին հետեց
և խնամակալով՝Խնը, մեծ ազդային ժողովի վըճ-
ռին թողնելով՝ ընդունել կամ՝ մինիստրով՝Խան,
կամ խնամակալով՝Խան հրաժարականը: Պատգա-
մաւորները, որքան կարելի է այժմ ենթադրել,
լը ցանկանային մերժել թէ առաջին և թէ երկ-
րորդ խնդրը հրաժարականի մասին, ջանալով
հարցնել խնամակալով՝Խնը մինիստրով՝Խան
հետ:

[illegible]

ԲԵՐԼԻՆ, 27 յունիսի: Ձիերի արտահանութիւնը
Կերմանիայից կրկին թոյլատրւած է:

ԼՕՆԴՕՆ, 27 յունիսի: Իրլանդական դատաստանական-քրեական օրենքը ընդունված է համայնքների ժողովի կողմից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունիսի: Յուլիսի կէսին Սի-
աիբը հն ուղևորվելու երկու էկսպեդիցիա, որոնցից

մէկը կը հետադադարէ Տոմսերը մինչև իրկուսուկ երկաթուղու շինելու տեղը, իսկ միւսը պէտք է որոշել, թէ որն է ամենաձեռնառու ուղղութիւնը Վլադիվոստոկէ մինչև խանկի երկաթուղու գիծ անցկացնելու համար:—«Journal de St. Pétersbourg» մատնանի: անելով Կորուրդի իշխանի Բոլշակովի դահլի համար ընտրելով, բաւականա- նում է առայժմ միայն իշխելով, որ Ռուսաստանը երբեք չի ընդունի այն ժողովը օրինական լինե- րը, որը ընտրել է այդ իշխանին:

Կ: ՊՈԼԻՍ, 28 յունիսի: Դրուսոնդ-Վ. Օլֆին յայտնված է էլի յետաձգել Կ. Պոլսից հեռանալը: ԼՕՆԻՍ, 28 յունիսի: Երեկվայ Աղբերջատարի դորահանդիսից յետոյ, որին մասնակցում էր 58 հազար մարդ, թաղուհին չորհակալութիւն յայտ- նեց զօրքին նրա ծառայութեան համար, և յոյս յայտնեց, որ իր թագաւորութեան վերջին տարի- ներում անգլիական ազդը կը վազելի խաղաղու- թեան բարեքները:

ՓԱՐԻՑ, 28 յունիսի: Գնեքալ Բուլանտէի իր նոր պաշտօնատեղին, Վլէրմոն դնալը՝ Փարիզի ե- րիտասարդութեան մի մասը պատուեց ոգևորված ցոյցերով: Կայարանում հաւաքված ամբողջ երկու- ժամ կանգնեցրեց զնացը, այդ պատճառով գե- ներալը դուրս եկաւ վաղօրեայ և տեղաւորվեցաւ շոգեմեքենայի վրա, որը ճանապարհ ընկաւ միայ- նակ, առանց վաղօճների:

ՏԻՐՆՕՎՈ, 28 յունիսի: Ազգային ժողովը երեկ մի պատգամաւորութիւն ընտրեց, որը պէտք է ներկայացնի Կորուրդի իշխանին նրա ընտրու- թեան վերաբերեալ մէջոք: Պատգամաւորութեանը յանձնարարված է խնդրել իշխանին, որ շուտով գայ Բոլշակով: Խնամակալութիւնը ընդունեց մի- նիստութեան հրաժարականը, և յանձնեց Ստի- ւովին նոր մինիստրութիւն կազմել ժողովը մեք- ժեց խնամակալութեան հրաժարականի խնդրը, և խնդրեց խնամակալութեանը սպասել մինչև Կո- րուրդի իշխանի գալը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ
Յունիսի 26-ին
Ռուսաց 1 բուրլ ԼՕՆԻՍի վրա արժէ 21³/₃₂ պէնս.

—	—	Համարքի վրա	181 ¹ / ₄	պֆ.
—	—	Փարիզի վրա	224 ¹ / ₂	սան.
Ռսկի	—	արժէ	9	> 25 կ.
Մարտային կուսօններ	—	—	179	> 50
Արծաթ	—	—	1	> 27
Բորսային դիվիդենդներ	—	—	4 ⁵ / ₈	> 61 ¹ / ₂ 0
Պետակ. բանկ. 5 ⁰ / ₁₀ տոմս	1-ին շրջանի	100	> —	
—	—	2-րդ	99	> 25
—	—	3-րդ	99	> 12
—	—	4-րդ	99	> 12
—	—	5-րդ	99	> 12
—	—	6-րդ	—	> —
Արեւելեան 5 ⁰ / ₁₀ փոխառութ. 1-ին շրջ.	—	—	99	> 12
—	—	2-րդ	99	> 25
—	—	3-րդ	99	> 50
Ներքին 5 ⁰ / ₁₀ առաջին փոխառութ.	—	—	262	> 25
—	—	—	248	> —
5 ⁰ / ₁₀ ընդհան. —	—	—	102	> 37
Ոսկեայ ընդհան. —	—	—	193	> 75
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառու- թիւն	—	—	167	> 50
Նոր երկաթուղային ընդհան. —	—	—	99	> 62
5 ⁰ / ₁₀ գրաւական թղթեր կալուած.	—	—	—	> —
—	—	—	169	> 50
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի —	—	—	98	> 62
51 ¹ / ₂ 0 գրաւական թղթեր Խերսոնի կալուած. բանկի —	—	—	99	> —
6 ⁰ / ₁₀ գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան. —	—	—	102	> 75
—	—	—	102	> 62
—	—	—	102	> 37
—	—	—	102	> 75
—	—	—	102	> 75
—	—	—	102	> 50
—	—	—	102	> 62
—	—	—	102	> 50
—	—	—	27 և 43 տ.	99
—	—	—	18 և 43 տ.	99
Վ. օգտակ. Կամսկի բանկի ակցիաները	—	—	707	> —
Ռուսաց երկաթուղային ընդհան. ընկ.	—	—	271	> 75
Բիւրնակ-Վ. օգտակ. ընկ. —	—	—	96	> 75
Ս. Պետերբուրգի քաղաքային օրի- ղացիաներ. —	—	—	95	> 75
Մոսկովյի քաղաք. օրի. զաւգիւհներ —	—	—	96	> 25
Օղէտայի —	—	—	95	> 50
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրի. —	—	—	—	> —
Նոր փոխառութիւն. —	—	—	84	> 12
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութեանը ֆոնդերի վերաբերմամբ հանդարտ է:	—	—	—	> —

Խմբագիր-հրատարակող ԳԻԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻԱՆԴԱՆՈՅ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր
ԱՌԱՌՈՏՆԵՐԸ
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, վնասէրական և ատամի ց.
Կին-բժիշկ ԻՍԱԶԱԿԱՆՆԵՑ—9—10 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲՈՒԿՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երկխայոց և կանանց ց.
Կին-բժիշկ ԿՈՐՈՆԱ—11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
Ա. ԳՈՒՐԿՈ—12¹/₂—1¹/₂ ժ. աչքի և ներքին ց.
ՋԱՏԵՎՍԿԻ—12—1 ժ. ջղային ց. և էրէկտրականութեամբ:
ԱՐՏԵՄԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ կանանց ց.
ԵՐԵՎԱՆԵՐԸ
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Հիւանդանոցում է մահ կա բարձուհի ՄՕԳԵՐ:
Վճար—50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ԾԻԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ
ՐՕՍՏՈՎԻ (Դոնի վրա) ԳՈՐԾԱՐԱՆՏԵՐԵՐԻ
ԱՍԼԱՆԻԴԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

Մագաղինը Դվորցովայա փողոցում, Ղալաբարովի տանը, Թիֆլիսում, պատիւ ունի յայտ- նելու պ. պ. ԾԻԱԽՈՏԻՆ և ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ, որ փետրվարի 15-ից ներկայ թիւ մենք բաց արինք ծխախոտի առևտուրը, որտեղ կարելի է ստանալ ԾԻԱԽՈՏԻ և ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ ա- մեն տեսակները մեր զործարանից բերված: Մեր ԾԻԱԽՈՏԸ իր առանձին յատկութիւնների համար, լաւ համ, մղմութիւն և դուրեկան արժանատ, վայելում է երկարամիտ հոգակ և մեծ տարածութիւն Ռուսաց կայսրութեան և արտասահմանի շատ քաղաքներում:

Թիֆլիսում նոյնպէս և Անդրկովկասում մեր ֆարիկայի ծխախոտի արդիւնքները մի- նչև այժմ յայտնի էին, այդ պատճառով մենք բաց արինք ծխախոտի մագաղինը, ցանկանա- լով այդ մեր արդիւնքները կրկին մէջ մտցնել:

Խոնարհաբար խոնդրում ենք պ. պ. ծխողներին և վաճառականներին ան- տես չառնել ծանօթանալու մեր ֆիրմայի արդիւնքների հետ:

Օտարաքաղաքացիներին պահանջները կատարվում են շուտ և ճիշդ կերպով, փօստի ծախսը մագաղինի վրա է: Պրէյսկուրանները ցանկացողներին անվարձ են ուղարկվում:

Պ. Պ. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՆՎՈՐՄ Է ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՋԻՅՈՒՆՆԵՐ:
ԱՍԼԱՆԻԴԻ Էղբայրներ 18—25

ԽԱՐԱՍՈՒՐԻՍԱՐԻ երկուս. դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է որ դպրոցի համար հարկա- ւոր է ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒՐՈՒ ուսուցիչ: Ցանկացողները թող դիմեն պայմանների մասին «Մշակի» խմբա- գրատունը:
1—5

ՀԱՐԿԱՌՈՐ Է ՄԻ ՌԻՍՈՒՅԻՉ ԵՒ ՄԻ ՎԱՐԺՈՒՂԻ. Ուսուցիչը պէտք է դասախօսի թուաբանութիւնից և հայոց պատմութիւնից, իսկ վարժուհին պէտք է պարապի ձե- ուղործութիւնից: Ցանկացողները շատ շուտով պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեան մանրամասն պայմանները իմանալու համար: Դպրոցի համար աւելի յարմար կը լինի եթէ ուսուցիչը և ուսուցչուհին ամուսիններ լինեն:
1—3

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ
ԲԱՅՅԻԻ
ԿԱՅԾԵՐԻ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ
ԳԻՆՆ Է 2 ԲՈՒԼԻ 50 ԿՕՎ.

Ճանապարհի ծախսը հեղինակի վրա է: Գիրքը բաղկացած է 722 մեծատիպ երեսներից: Վաճառվում է «Թիֆլիսի» կենտրոնական գրավաճառանոցում և հեղինակի մօտ: Բաժանորդները կանխապէս պէտք է յայտնեն իրանց հասցեն, եթէ տեղափոխվել են իրանց նախկին տեղից:
2—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻՍԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Զորեքարթի, յուլիսի 8-ին, ՄԵՐՏԻՆ (MEURTHE) շրջանում, նաւապետ ՍԵՐԵՆՈՆ (SERENON) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէլը: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնի և Թիֆլիսում պ. Բէնօնի, նախկին Արժ- րունի գաղութում, № 103.
3—4

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHÉHIA NTZ
MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԵՆԱՆՏԻ առևտրական գրասենյակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենա- լով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆաբրիկանե- րի հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդը, բուրդ, բամբակ, ցորենիցէն, նաւթ և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրո- պայում: Ցանձնարարութեամբ կընդունի զարձեւ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապ- րանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնառու պայ- մաններով փող կը տայ ի հաշիւ մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հաս- ցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) ՄԻԼԱՆԻ (Italia).

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)
ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ
ՍՈՒԼԻԱԿԻ ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆՅՈՅ (GIRONDE)

Ատամներ համար Բենեդիկտեան հայրերից պատ- րաստած էրիկսիրի ամենօրեայ զործածութիւ- նը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է ատամները փշանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամ- ները, մաքրում է և պահպանում է ծնօտը:

ԳԻՆԸ գորակը 2 և 8 ֆրանկ. ֆոշին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատտա՝ արկղիկը 2 ֆրանկ:
Հիմնարկութիւնը դրոյթիւն ունի 1804 թ.ից.
Գլխաւոր աղէտը SEGUIN, Բորդօ (Ֆրանսիա).
Թիֆլիսում՝ Ծախվում է պ. Բերլըմոնի մագաղինում և պարֆիւմէրների ուրիշ մագաղինե- րում: ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ. Է. Ա. Էնկէնի և Գ. Ա. Օտիւկի մօտ:
36—48